Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԲԱԽՇՕ

ԵՐԳԻՓԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

(ԹԻՖԼԻՍԻ ԲԱՐԲԱՌՈՎ)

ԳԻՆԸ 10 Ռ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԶՈՒՔՈՐ ԶԱՎԻՆԵԱՆՑԻ

891.99
F-21

ԹԻՖԼԻՍ
ԱՐԱԳԱՏԻՊ ՄՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ ՊՈԼԻՑԵՅՍԿԱՅԱ, 7.
Электропечатня Н. Аганьянцъ, Полицейская, 7.
1907

01 JAN 2009
19 NOV 2011
891.99
Գ-27

ԲԱԽՇՕ

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

(ԹԻՖԼԻՍԻ ԲԱՐԲԱՌՈՎ)

1911
1001

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԶԱՔԱՐ ԶԱԼԻՆԵԱՆՑԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Армянская Библиотека
Ն. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
ԱՐԱԳԱՏԻՊ ՕՐ. Ն. ԱԳԱՆԵԱՆՑԻ ԹՕԼԻՍԵՍՈՒՅՑ, 7
Электропечатня Н. Аганьянца, Толстолесская, 7.
1907
(27)

ՀՀԱԱ ԳԱՏ. Բ Ս
27.02.2013
ՀՀԱՏ ԿՈՄ Ց

2 3.279

ՀՐԱՏԱՐԱԿՉԻ ԿՈՂՄԻՑ

Ցարդելի հեղինակի երգիծաբանական անտիպ գրուածքները յաճախ կարդացուելով մեր ընկերական շրջանում՝ շատ անգամ է մեզ ծիծաղ և բաւականութիւն պատճառել, իսկ նրանց հրատարակելու համար երբէք մեր մտքից չի անցել։ Սակայն վերջին ժամանակներս երբ նկատեցինք «Զարկ» շաբաթաթերթում և «Խաթաբալա»-ում այդ գրուածքներից լոյս տեսած, ուրեմն խմբագրական բովերից անցած ու հաւանութիւն գտած, հարկ համարեցինք հեղինակի համաձայնութեամբ, առանձին գրքոյկներով լոյս ընծայել թէ խրախոյս ընկեր հեղինակի և թէ ի զուարճութիւն մանաւանդ Թիֆլիզի զբօսասէր ժողովրդի։

Զաքար Զալինեան

Թատրուի Հայոց
Հոլիփսիմեան Դպրոց
Եկեղ.-Խուակ. (Օրիորդաց)

ՄԵՌԵԼՆԵՐԻ ՄԻՏԻՆԳ ԽՈՋԻՎԱՆՔՈՒՄ

—

'Իս ու Եօվանը մէ-մէ գամ գնում ինք Խոջիվանք, բօլթա ինք տալի, գերեզմեերու քարերու վրայ կարթում ինք, թէ փլան մարթը վուր տարուն է մեռի, ինչ փեշակ է ունեցի, էտէնցուլթինով մէ կրուզ ինք տալի, իժում գնում ինք Շիրաջխանա՝ Արշակ Մաժուլովի դուքանը ու մէ քիչ բողազնիրս թաց անում։

Համա էս վիրչի գամը շատ վախեցանք։ Շատ, Է, վուր էլ ասիլ չի ուզի։ Էնթաւուր բան տեսանք, վուր պատմիմ, չիք աւտայ։

Ջէր Ծատուրինց Գիգոլու գերեզմնին չէինք հասի, վուր ինչոր փսփսոցի ձէն էկաւ, ու ինչ տեհնինք.—մեռիլնիրը մէ-մէկ գերեզմեերուցը դուս էին գալի ու վազում Եագոր Մարտինիչ Ակոփովի մատուռի առչիւը կաղնում։

Էնէնց վախեցայ, էնէնց վախեցայ, վուր կինաղամ լեղիս պատռեցաւ, մաշ. համա էն բէուղուփ Եօվանը իսկի այնումը չըգցից ու

ինքն էլ գնաց թամաշա անելու։ Էտ վուր տե-
հայ, 'ես էլ մէ քիչ սերտս դայմացրի ու գնացի
դէմուդէմ հեռու-մոդիկ կաղնեցի։

Կամաց-կամաց մեռելները մոդ էլան։ Ինչ
մեռել էլ վուր չէր ուզում դուս գայ, բղաւում
էին վրէն՝ «տո, խուլիգան, դուս արի, էլի», զո-
րով դուս էին բերում գերեզմնից ու մէ լաւ
դնքսում։

Դիպ վուր մոդ էլան, մէ-էրկուսին դարա-
ւուլ դրգեցին գերեզմնատան դռներու մոդ, վուր
թէ վուր դաղախնիր գան՝ իմաց տան. լիժում
մէկին վի քաշեցին, վուր ճառ խօսէ։ Մէկ ասի,
թէ էս Արծինովն է, Արծինովը չէր, թէ Բա-
փին է, ասի, Բափին էլ չէր, ով գիդէ, մէ
մունդրէկ վարժապետ կուլէր էլի։

Ճառ խօսողն էսէնց կցից.

«Մեռած ննդրտինք, կօսէ, ի՞նչ ինք փիքր
անում։ Էսքան տարի մէջկի վրայ վիր ինք ննդի
ու տէրտէրներու խօսկով մուլափ ինք տալի, թէ
'իփ պիտի Քրիստուսը մէկէլ գայ ու միզ վիկա-
ցնէ, ինչ է տէրտերը թաղելու վուխտն ասիլ է,
թէ ժամ չըգաք մինչկի Քրիստոսի գալը։ Տօ,
տէրտէրի խուսկը խօ փեչատ չէ։ Կաղեօնի փե-
չատը կոտրում ին ու, տէրտէրի խուսկը մինք
չինք կանայ կոտրի՞. դրա համա միզ խօ Սիբիր

չին տանի։ Էսքան մուլափ տալ կուլի՞, վուր
մինք ինք մուլափ տալի։ «Ինչկի Պետրուսը գու-
քա. Պաւլի հոգին դուս գուքայ»՝ կօսէ, հիմի
միր բանն է, ինչկի Քրիստուսը գուքայ, մինք կի
հոտեցանք ու փթեցանք ու... Մէ աչկներուդ բաց
արէք ու թամաշա արէք, է, աշխարքումն ինչ
է կատարում։ Միր չմեռած ննդրտինքը վուր
ուզում ին իրանց խազէինին իրանց ուզածը
կատարիլ տան, ջէր մէ էրկու դեպուտատ ին
դրգում նրա մոդ, իրանց ուզածը այտնում, 'ի-
րիք օր էլ վադա ին տալի ու թէ խազէինը ատ-
կազ է անում, զաբատովկա ին անում։ Հիմի,
ննդրտինք, մեռելները, 'ես ուզում իմ, վուր մինք
էլ միզմէն 'իրիք մարթ ջոգինք ու դրգինք Քրիս-
տուսի մոդ, ասպսրինք վուր թէ գալիս է գայ,
մէ շափաթ էլ վադա տանք, ու թէ չէ գալի,
իմաց անէ. էն վուխտը մինք միր գլխի չարէն
կու տեհնինք, առանց նրան էլ լաւ կու վիկե-
նանք։ Հը', վո՞ւնց է, հաւնում ի՞ք, թէ չէ»։

—«Հաւնում ինք, հաւնում ինք»—բղաւեցին
մեռելները ու ծափ տուին։

Ձեռաց 'իրիք դեպուտատ ջոգեցին ու դրանք
էլ ովքեր ին, մէկը բաղաղ Գէորքովը, մէկէլը Ծա-
տուրից Գիգոլը, վրայ 'իրիքն էլ Եգոր Մարտի-
նիչը (էրևում է, վուր սրանք դիփունքն էլ ցո-

ցիալիստ ին դառի, չունքի դառ ու դաղարկ ին մտի գերեզման)։

Միտինգը վուր պրծաւ, դիփունանքն էլ յիդ մտան իրանց գերեզմիրը։

Ջոգած դեպուտատնիրը էրկուշափթի ճամփա կու ննգնին Քրիստուսի մոդ Փարաջանովի թելեշկով։ Ով որ ձիդմէն ուզում է իմանայ թէ Քրիստուսն ինչ ջուղաբ է տուի մեռելնիրու դեպուտատներուն, կիրագի յիդ գուքան, համեցէք Խոջիվանք ու նրանցմէն իմացէք։

ԷՍԷՆՑ ԷԼ ՕՑԻՆ ԿՈՒԼԻ՞.

Աստուձ գիդենայ, փոշտալիոն Տարասին վուր տեհնում իմ, լեղիս պատռվում է, իլաքի թէ ինձ ամա էլ թէ վուր պիսմո է բերում, մանամ բաց իմ անում ու կարթում, ծնգնիրս դողդողցն է նգնում։

Խիստ իմ վախենում, հէնց գիդիմ պարտիէմէն է ղրգած ու փուղ ին ուզում։

Ախար, փիս խասիէթ ունեմ, է... մէ կապէկն ինչ է, մէ կապէկ չիմ տայ վուր աչկներին կպցնին. մագրամ նրանք ուզիրս փիս խասիէթ ունին ինձմէն. միզ պէս մարթու համար

օխտը կապէկանուց գուլէն չին խնախում, բաս չէ ու միզ պէս կուլին այ, գուլէն վուր մէկը մէ կապէկ ըլի չինք առնի թադարիկի համա, նրանք կի մէկին մէ աբասի կուտան ու միզ փէշքաշ կոնին։

Դրուստ է՞, փուղ շատ ունիմ, մագրամ ինչի՞ տամ. պարտ իմ, թէ՞ պահ իք տվի. է... մէ ժամանակին թամաշա արէք, է. Աստուձ վուր վէքսիլով փուղ տա ու Քրիստուսն էլ մոծամայ ըլի, էլի ատկազ կօնիմ, ուր ճնաց թէ խալխին բաժնիմ։

Ախար մէկը չէ, էրկուսը չէ. մէկը գալիս է, թէ զագրանիցումը բոմբիր ինք գակազ տի, ու մէ քսան թուման պիտի տաս կօսէ թէ չէ ու... (միթոմ խիս շատ իմ սիրում այ բոմբը վուր փուղ էլ տամ). մէկէլը թէ, եարաղ պիտի արնինք կօսէ ու...

Տօ, ջհանդամը ձիր գլուխը. թէ փուղ ունիք, գուզիք եարաղ առէք, գուզիք արաղ. ի՞նչ իմ հոքում, ինձ հիդ ի՞նչ բան ունիք, ինձ ի՞նչ իք հարցնում, էն օրը իս էլ մէ դանակ առա, գինու համա դիղց կըճպելու, փուղը ձիդմէն ուզեցի՞ հա՞...

Խիղճ Ծատուրենց Բագրատը իրիք ամիս է դուքանը կողպիլ է ու տուսաղի հանդը տանը

նստած է. հինգ հարուր թուման փուղ պիտի տաս, կոսէ. շատ ունիս, կոսէ։

Է՜, Աստուած չունիք, վա՛, շատ էլ իրա աշխատածը չէ ու շատ ունէ, ձիզ ինչ, նրա մամէն խօմ ձիզ ամա չէ աշխատի. էտ էլ դառաւ Գուրգենովը ու Ռոտինովը, վուր վախեցրիլ իք, ու խիղճ էրէխէրքը տանէմէն չին կանացի դուս գայ։

Մագրամ էտ մէկը խիստ լաւ ին անում, վուր տանէմէն չին դուս գալի, օրէսի դէնը մինք էլ խուսկնիրս մէկ կոնինք, դուքնիրը կու կոխպինք, ու տանը արխէին կու նստինք. տեսնինք ով կու փոշմի. փառք Աստու մինք էնքան ունինք վուր միզ հէրիք է, վայ ձիր միխկը, վուր քաղցած կու զկուտաք։

Ախար հէրիք էլաւ, է՜, վա՛, ամեն բանով ձիր խուսկը կատարեցինք, էլ ի՞նչ իք ուզում, դաթար տվէք, էլի՞ վա՛, բարէմ, մէ-մէ դաիրա վի կալէք ձեռներիդ ու միզ էլ մայմունի հանգը հայաթներումը խաղցրէք, իս ու իմ հոքին էտէնց ուփրօ շատ փուղ կու մօտ անիք։

Ինչ վուր անում ին, դիփ էտ մաւի խալաթավուրնիրն ին անում. Աստուձ գիդենայ, հէստի ատում իմ, հէստի ատում իմ, (համ էլ վախում իմ) վուր աճքով աճկը չիմ ուզում տէհնի. գի-

շիրը դուքնէմէն տուն գնալիս վուր բաստ ին գալի, ուզում իմ ճամփէս փոխի. արի ասա՛ մէկ էլ տէհար արչիւդ ցցվից, ու արա՛, ինչ վուր ունիս կոսէ հանէ, ջալդ. չարէտ ի՞նչ է, պիտի տաս, չիս տա՛ կու փոշմիս։

Աղաք սովորուտկ ունէի առուտնիրը, էրես լվանալուց էդնէն, թարս կու կանգնէի ու կոսէի, հրաժարիմք ի սատանայ և ամենայն խափէութենէ նորա. հիմի կի ասում իմ, հրաժարիմք ի մաւի խալաթաւորէ և ի բէբութէ նորա։

ՀԻՆ ՌԵԺԻՄԻ ԿՈՒՊԾՆԻՐԸ

—«Ալիքսէի Վարլամի՞չ, ինչի՞ դուքանը չիս բաց անում...»։

—«Ջեր ութը չկայ, տասը նմուտ պակաս է, պըրաւա չունիմ, գանա դուն չիս գիդի՞, Եաղօր Արտեմիչ, վուր դաստի խօսացնում իս...»

—«Գիդիմ, գիդիմ, Ալէքսի Ջան, մագրամ ասում իմ է՞լի. հայ գիդի հին ժամանակ, վո՞ւրդի էր էստունք. գուզէիր ութին բաց կոնէիր, գուզէիր վիցին, ով էր քու դավէքարը, ու յիփ վուր քէփդ կուտար՝ կու կուխպէիր»։

—«Հէ՞յ գիդի, հա՛յ, քանի ժուգ է Գրիգոր

Եակուլիչի հիդ մասլահաթ չիմ արի. գիշիրուայ ութին, ինին կեհէի ու մանամ գիշիրուայ տասումէկը, քաղցրը մասլահաթ կօնէինք. դախլդարը, բուղալտրնիրը, փրկաշիկնիրը ու բջիրը, եասաուլնէրի հանգը կաղնած մուլափ էին տալի, վուր մինք մասլահաթը պրծնինք ու նրանք էր իժում դուքանը կողպին...

—«Էհ՜հ, էտունք միտս մի գցի թէ քու Աստուձը կու սիրիս, Եգօր Արտեմիչ, վուր միտս իմ գցում, լամիս գժվում իմ։

Առուտնիրը հինգին կեհէի դուքան բաց անիլու, կու տեհնէի վուր փրքաշիկնիրը էկիլ ին ու քնաթաթախ ինձ ին մուլափ տալի. նրանցմէն մէկը բալնիքը ձիռնէմէս կու առնէր, կու բաց անէր դուքանը, մէկը կու աւելէր, մէկէլը կու թափ տար, մանամ իս էլ մէ ջուխտ խոտակ մում կու վառէի դախլի առջիւը, իժում կու ղրգէի, չայ բերիլ կուտայի ու մանամ իս չայով չէի կշտացի, օչով չէր մօտկանայ. վայ էն փրքաշիկի միխկը, վուր մէ հինգ նմուտ ուշանար, շան լափը գլխին կու ածէի ու հօրն ու մօր գերեզմանը չուրս գրօշ կու շինէի։

Համա աբա՜ հիմի, ութէմէն վաղ, բաց արա դուքանը, ան վիցէմէն ուշ կոխպէ, ան թէ չէ փրքաշիկին մէ աւել խուսկ ասա, ձեռաց խուսքնիրը մէկ կօնին ու զաբաստովկա կու սարքին, իժում արի ու, մենակ եօլա գնա, չարէտ ինչ է, ձէնդ պիտի կտրիս...

Հիմի էրթօրա է, կօսէ, աղա ու նոքար չըկայ կօսէ, դիփ մէկ ինք, կօսէ, դիփունանքը ննգիր ինք, կօսէ. (ձիր գլխի տրաքուիլը, միթոմ քառսուն, քառսուն թուման փող ինք դրի ու դուքան ինք բաց արի ա՛յ, ննգիր ինք։)

Տօ, ցօցիալիստնիր իք, ինչ վուր զահրուժար իք, էնչախը ո՞ւր էիք, յիփ վուր մինք նօքար էինք, ո՞ւր էիք կորած, կու լուս ննգնէիք էլի, միզ ամա էլ կու բարեխօսէիք, միզ ամա էլ չափշ գուքայիք, վուր մինք էլ հիմիկուայ, նօքրնիրու հանգը, աղավարի ապրէինք, էլ ինչ հիմի՞ լուս ննգաք, միզ էիք մուլափ տալի՞, վուր խազէին դռանանք, դուքան բաց անինք ու գաք միր եախէմէն բռնի՞ք...

Մախլաս...

ՄԵՐ ԲԱՂԿԻ ԳԱԶԷԹՆԻՐԸ.

Իս վունց ուսում ունիմ վունց էլ գրի սիվ ու սիպտակն իմ կանացի ջոգի, մագրամ քիչ ու միչ հասկանում իմ էս միր ժամանակուան բաներէմէն։

Այ, խուսկի համա գուզիք, ասիմ, թէ ցոցիալիստը վուրն է, դաշնակցականը վուրը, անարխիստը վուրը ու բունտովչիկը վուրը. մաշ, այ դումէն էլ գիտիմ, թէ ինչի համա է, դումէն միզամա է, միր ջոդած մարթիքը պիտի գնան, ու միզամա խօսին, էն էլ գիդիմ թէ ինչ պիտին խօսի, գուզիք ասիմ, համա էլ ինչ ասիմ, դուք էլ կու իմանաք, «Հոսանք» գազեթումը գրած կուլի։

Էստունք դիփ իմ վուրթին սովրեցրից, մաշ ինչի՞ տալի շկօլումը, վուր էտունք էլ չսովորի, ու ինձ էլ չպատմի, Աստուձ գիդենա հեստի կարթում է գազեթը, վունց որ ջուրը ու խիստ էլ ախոտա ունէ գազեթ կարթալու. բաս էնդուր էլ դրա համա չուրս տէսակ գազեթ իմ դուս գրի. «Մշակ», «Երկիր» «Խաթաբալա» ու մէկն էլ ռանակ գազեթ «Տիփլիսկի Լիստոկ»։

Դրուստն ասիմ, հիմի շատ իմ փոշմընում, ախպէր, էնդուր վուր էտ միր գազեթի ուստեքը, խիստ բիաբուր մարթիք ին. ջալդով վադէն թամամ ըլի ախպէր, լիժում, մուքթա էլ վուր ղրգին չիմ ուզում։

Իմ տղի խիլքին ինչ ասիմ, վուր զահլէս տարաւ, թէ մամի ջան, թէ գուզիս վուր մարթ դառնամ, կօսէ, ինձ համա գազեթնիր դուս գրէ կօսէ. էնդուր վուր, մարթ կօսէ, էնքան շկոլումը

բան չի սովրի ինչքան գազեթ կարթալում կու զարգանա կօսէ։

Իս էլ աւատացի, տղիս բեդամաղ չարի, ու մէ քանի մանէթ բանդ արի։ Հախ Աստու առչի գամը, մէ, երկու գազեթ, վուր ստացանք խիստ հաւնէցի, տղէս կարթում էր ու իս էլ անդաճ էի դնում, տեհնում էի վուր, մարթ դրուստ վուր խիլք կանա սովրի, վուր ամեն օր կարթա էնէնց լաւ-լաւ բանիր էին գրում։

Դու մի ասի թուրմէ խալխին պիրոդ էն տալի, իս բէխաբար, էրևում է էլի՞ վա՛, հիդնու հիդը սարսաղ սարսաղ, բանիր ին գրում, ու հիմի էլ մէ գազեթի ուստէն, մէկէլ գազեթի ուստին ինչօր բերանն է գալի, բիաբուր ին անում։

Այ «Մշակ» գազեթը «Երկիր» գազեթին էն ուշունցնիրն է տալի, վուր տաճկա մանածող, կինտոէքը բէսաբ ին արի. էնէնց էլ «Երկիր» գազեթը, «Մշակ» գազեթին։

Տօ ախմախնիր, թէ մէկ մէկու հիդ, հախ ու հէսաբ ունիք ճամփին, չի՞ք ռաստ գալի՞, մէ լաւ մէկ մէկու բիաբուր արէք ու թէ գուզիք, մուշտակռիւ էլ սարքեցէք. ի՞նչ իք միր զահլէն տանում, ի՞նչ իք գազեթումը գրում, ձիր ուշունց սովրելու համար ինք առնում ձիր գազեթը, թէ՞ խիլք սովորելու համա։

Վա՛ էս ի՞նչ բան է, տո՛, հիմի դաղաղ Փաշիկօն, վուր դաղաղ Սեդրակի հիդ հախ ու հեսաբ ունենա, պիտի ապրանքը փալշիւացնէ՞, ինչի՞, մուշտարին ի՞նչ միդք ունէ. էնէնց էլ ձիր դաղէթը, ձիր ապրանքն է, դուք պիտի չալիշ դաք վուր լաւ լաւ բանիր գրիք ու մուշտարին շատացնիք։

Խաթաբալինը չլի, մէկ էլ տէհար, Թոփչիովին, Տիգրան Օհանէսովին, ու Սպանդարին, մայմունի հանգը մի մինձ գլխնէրով ու կարճ, կարճ բոյնով նխշից, կօսիս թէ միք ջլիս, էշիր ինք ու էտ պատուական մարդկերանց, չինք ճանչնում, թէ ինչ հանգի, բոյով, բուսաթով ու խելօք մարթիք ին։

Դրանցը ո՞վ չի ճանչնում, Թոփչիոն է վուր էս տարւանից բռնած, մանամ մէկէլ տարին գիդէ թէ, տարին քանի օր է, քանի շաբաթ է, լուսին իփ պիտի բհամ դայ ու արեգագը իփ պիտի խաւարի։ Օվանիսոն է՝ վուր գլուխ ատուական է, հերու Էրևան վից բունտովչիկի ազատից բիրդից ու էս տարի էլ Գանջա չուրս մարթասպան։ Սպանդարն է՝ ախպէր ու... Էտ մարթն էլ հին դաղէթի ուտայ է։ Էս տարի տէհաւ վուր իրա դաղէթը խօդումը չէ, աստավկայ տուից։

Դու դրանցմէն շատ խելօք իս, վուր դրանցը չիս հաւնում ու քու խէրի համա էտ պատուական մարթկերանց մայմունի հանգը նխշում։

Տիփլիսկի Լիստոկի բանը ու գուրձը խօմ կտրիլ է, սաղ դաղէթը վուր թափ տաս, մէ խիլք կտրիլու բան չի վիր ննդնի։

Զադրանիցա ինք փախչում ու էժան պօրտօպիան ինք ծախում, կօսէ, ադրեսը Սօլօլակ. մէ տիղ կուխարկա ին ուդում, կօսէ. թածմինդա չուրս լաւ օթախ կայ քրիհով, կօսէ. մէ դօխտուր էլ իրան գովում է թէ խիստ լաւ դոխտուր իմ ու դիփ ինձ մօդ էկէք։ Տօ ջհանդամը ձիր գլուխը, էտունք ինչ միր բանն է վուր գաղէթումն էլ գրում իք։

Էն շափթին էլ մէկէլ տէհնիմ տղէս լեղապատառ տուն ննգաւ, թէ, մամի ջան, մէ երկու շայի տու, թազա գաղէթ է դուս էկի, վի կալա էրկու շայի տուի, գնաց ձեռաց, ափալ-թափալ առաւ ու բերից, ասում իմ վուրթի, էտ թազա դաղէթի անումը ի՞նչ է, թէ, Հալիլա մամի ջան, ա՛յ էրէսին էլ հալիլա նխշած։

Տէհնիմ դրուստ որ մէ հալիլա է նխշած, ու մէ այբէջար մայմուն էլ մէջը թամաշայ է անում, տակն էլ գրած է, թէ, էս մայմունը հալիլումը իրա սփաթը տէհնում է, մագրամ չէ աւտում, կօսէ, թէ իրա սփաթն է։

1001
1167

Տօ, մայմունները հիմի դուք իք, թէ՞ էտ խիղճը, վուր նխշիլ իք էդ հալիլի առչիւը, մայմունը դուք չիք, վուր մէ գլուխ Շխլոյի թաղի կնիկարմատներու հանդը, բանբասանք իք անում, ու խալխին մասխարա դցում։

Աստուձ գիդէնա, իս վուր նխշիլ գիդենամ, մէ մինձ կարդօնի վրէն մէ մինձ հալիլա կու նխշիմ ու էտ մայմունի տիղը, ինչոր գազէթի ուստէք կաք ձիզ կու նստեցնիմ, վուր ձիր մայմունութինը ձիր աչկով տէհնիք։

ՄԻՐ ՏՂԷՐՔԻ ԲԱՆԸ ԲՈՒՐԹ Է

—

Շատ խարաբ էլաւ, միր աշխարքը, ախպէր, շատ, շատ է՞ վուր էլ դաւի չունիմ. խարաբ կուլի, մաշ ինչ զահրումար կուլի վա, էսղադամ պարապ խալխ ո՞վ է տեհի, վուր հիմի մինք տեհնում ինք. խիղճիրը նստիլու ու մանգալու տիղ էլ չունին, ջհանդամա պարապութինը. Ալէքսանդրովի բաղը կոխպած, Պուշկինի բաղը կոխպած, մէ գարացկոյի սւպրաւի արչիւնէ, էն էլ սուտ ցօցիալիստներ, մօգոնովի դաշնակցականներ, դուս արած վարաժապետներ, ու աստաւ-

Вера

կայ տւած գեմնազի աշկերտներն ին զանիտ տրի։

Միթամ քիչ պարապ խալխ կային, Բոտինովն էլ էրկուսին դուս է արի, ձիր սփաթը չիմ հաւնում, կօսէ, ու համ էլ զարար իմ անում, կօսէ, աբա էդ ասելու խօսք է՞ ձիր սփաթը չիմ հաւնում կօսէ, տօ իժում քու սփաթը, մինք խիստ ինք հաւնում վուր քիզ վուչինչ չինք ասում. մանամ զանդուկըդ կիսատ էր, լաւ սփաթ ունէին ու հիմի վուր զանդուկըդ փուղով լցցրիր հիմի չիս հաւնո՞ւմ դրանց սփաթը, (լաւ քիզ էլ կու տեհնինք, երկու շային ձեռին բռնած դալաքխանա վազտալիս)։

Էստունք դիփ լա՞ւ, տօ էս միր ախջկիրքը տղէրանց բանը, ուփրօ ին խարաբ անում, վուրդի ասիս գլխնիրը տուն ին գցում. ախպէր գընում իս ապտեկխանեն, ըհը, դախլումը, աղջիկ, թիատրի դախլումը աղջիկ, մալոչնիցումը աղջիկ, իս ի՞նչ գիդիմ ամէն տիղ գլխնիրը տուն ին գցի ու խիղճ տղէրանց, տիղը բռնի, ու վունցօր վարաւուրդ իմ անում, օրէսի դենը փայտոնչիկութին, կոնկա մանածող ու արդանչիկութին էլ կոնին։

Էս բանը վուր մէ ցիվինդրաւորի մօդ չամ՞ս, կօսէ, մա՞շ, էտէնց է լուսաւորութին է,

ուրիշ տերութինումը դիփ ախչկիրք ին դախ-
լումը. տո՛, ախմախ, իժում ուրիշ տերութինու-
մը էսղադամ պարապ, տղէրք կան, վուր սար-
սաղ, սարսաղ, դուս իս տալի, թէ լուսաւորու-
թին է, տո՛ թէ լուսաւորութին է՞ բաս միր քու-
չեն ինչի՞ է մութը, գիշերւայ վեցին վուր մատս
աչքդ կոխիմ, չիս տեհնի։

Տո՛ էտ վուր ասում իք թէ լուսաւորութին
է, ու ախճկիրքը տղամարթու բարեբար պիտի
աշխատին, բաս ինչի էն խիղճ կուզիան, չոլախ,
ու ճորփլիան, ախչկերանց չիք նատեցնում դախ-
լումը, հը... թէ. դուք լաւ մարթիք իք ինչի՞ իք
սիրունը ջոգում, դանա էն կուզիան ու չոլախ
ախչկիրքը չին կանա դախլումը նատի ու փուղ
խուրդա անի։

Մելիք-Բաղդամովինը չըլի, քանի, քանի
ախչկիրք պրաշենիա ին տալի, թէ տիղ տու կօսէ,
ոչովին չէ վիկալի, ախչիկ չիմ բռնում կօսէ,
բաս հիմի ինչի՞ է բռնի էնդուր վուր, նրանք սի-
բուն չին էլի ու հիմիկուանը կի սիրուն է, է-
նենց էլ Գիորգի Շադինովը ու էլի ուրիշ շա-
տիրը։

Վունց որ վարաւուրդ իմ անում օրէսի դե-
նը տղէրանց տիղը դիփ ախչկիրքը կու բռնին,
ու ուրիշ ճար չկայ միր աղէրքն էլ փուղ բա-

ժինք պիտի հազրին ու էտ դախլդար ախչկե-
բանց վրէն մարթու գնան։

ԱՓՍՈՒՍ ԻՄ ՎԱՆՔԻ ԺԱՄ

Ախպէր, ինչ որ Էկմալովը մէռաւ, Վանքի
ժամի լաղաթը կորաւ, ափսուս չէր էն չաթը,
իփ վուր Էկմալովը սաղ էր, վուր տէհիլ էիր
Վանքի ժամումը կիրագի օրերով ասիղ գցիլու
տիղ չկար։

Իս խօմ ամեն կիրագի էնդի էի. էն բաշտէն
կեհէի, վուր իմ տիղը օչով գանիտ չանէ, ջէր
երքիչնիրը էկած չէին ըլում, վուր իս իմ տիղը
կաղնած էի ըլում փէչի կուղբին, ու մուլափ էի
տալի, վուր պատարաքը կցին։

Մէկ էլ տէհար երքիչնիրը էկան, ժամաշապ-
կնիրը կռան տակին բռնած, մոդ էրկու քսան
ու տասը հոքի, ձեռաց ժամաշապկնիրը կու
հաքնէին ու իրանց տիղիրը շարան-շարան կու
կաղնէին մէ էրգէն մազիրաւուր էլ մէջտիղը կու
կաղնէր ու ձեռներով շանց կու տար թէ վունց
պիտի երքին. ողորմած հոքի Էկմալովն էլ, հի-
դիւը հեռու-մօդիկ կաղնած աշակիրտներուն աչ-

կով ու ունքով կօնէր, վուր եաղլիշ չերքին։

Աստուձ գիդենայ, պատարաքը վուր մանամ իրիդուն քաշէր, օչով չէր բէզրի, էնէնց լաւ էին երքում. իլաքի բիմիցը, էն հաստ փուրով տիրացուն, վուր ձէն չէր հանում մարթու ջանը դաժրիալէբա էր ըլում, հախ Աստձու, Սուրբ սուրբի վուխտը քանի ջէր լացս էկիլ է, էնէնց մէ լաւ ձէնով էին կցում։

Էկմալովի մահից յիդը, մէ էրկու կիրագի էլ մէկ մէկու հիդ գնացի, ասի ինչ անինք թէ էկմալովը մէռաւ, նրա աշակիրտները խօմ սաղ ին, ու էլի երքելիս կուլին, մագրամ բան չունիս, գնամ ինչ տէհնիմ՝ մէ տիրացու նեբքիւն է կաղնած, մէ տիրացու էլ բիմի վրէն, ու պատարաք ին անում, ժամումն էլ վից կնիկարմատ ու չուրս տղամարթէմէն աւել չկայ, երէսս խեչ հանեցի, մէ էրկու ջէր ծունդրը դրի ու հոգոց քաշելով դուս էկայ ժամէմէն։

Էնթի կիրագի էլ եարմուկումն էի, ուզում էի խորոված ի համա մէ չուրս շամփուռ, մէ սրմովրի տրուբա ու մէկէլ աքանդաղ առնիմ, լաւը չրաստ էկաւ. չառայ, իժում փիքը արի բարէմ էսթինիմ, մէ Վանքի կուռն էլ կու դիպչիմ, ինչ խաբար է...

Դռան մուդ վուր հասայ տէհնիմ վուր հա-

եաթը խալխով լիքն է. սիրաս թռթռուցն ննգաւ հէնց իմացայ թէ էլի էկմալովի գրած պատարաքը չուրս ձէնով երքում ին ու ժամումը հալբաթ տիղ չկայ, խալխը դուսն է մնացի։

Նեքսիւ մտայ ժամը, ինչ իմ տեհնում, էլի էն էրկու տիրացուն ինչ որ ջաններումը ջան կայ, գոռում ին, ու էնէնց էլ վրայ ին տալի, կօսիս փափէն կու սառչի. սուս ու փուս դուս էկայ, տեհնիմ մէ ախչիկ մօտկացաւ, թէ «Բիձա խնթրում ինք մէ բիլէթ առնիս էրէկոյթի համա». հախ Աստձու չիմացայ թէ ինչ է ասում, էնքան կի իմացայ, վուր բան է ծախում, ասի չէ, չիմ ուզում. քիչ դէնը գնացի ինչ տեհնիմ՝ մէ եքա տիղ մէ աշխրքի գրիր ու կարտիչկէք ին վիրածի ու փոմիլորի հանգը առուտուր ին անում. մօդ երսուն, քառսուն էրեխէրք էլ ձեռնիրին պստիկ-պստիկ կարտիչկէք բռնած վազ ու վազ անելով գոռում ին «բաց նամակնէ՛ր, բաց նամակնի՛ր»։

Ինչ ասիմ ախպէր. վուրթէնն էլ շուր էկայ, ամեն կուռն էլ, առուտուր էին անում, ասի երի հա թուր-մէ էստի թաղա եարմուկա ին բաց արի ու իս կի բանից բէխաբար իմ, մէ երկու կրուզ խփեցի միր Վանքի հայեաթի եարմուկումը, կուլի ասի էստի ծախելիս ըլին իմ ուզած շամփուրնիրը, սմովրի տրուբէն ու աքանդաղը,

մագրամ չէ, մէ տիղ գրիր էին ծախում, մէ տիղ գազէթ, մէ տիղ պէրոժնի. ու ջէր էտ թաւուր բանիր չկար. ինձ ու ինձ փիքր արի, ասի, կուլի թազա եարմուկա է ու ջեր էրկրթէղէն չին ծախում, հիդն ու հիդը առաչ կեհայ ու մանամ թազա տարին կուլի վուր ննգուզ, միղրը, նուշ, խնձուր ու կամպետեղէն էլ կու սարքին. իս ու իմ հոքին էստի ուփրօ լաւ եարմուկա կու սարքի, էնդուր վուր, էստի վունց կօնկէն դաշլա կօնէ ու վունց էլ փայտոնը։

Մէ էրկու կրուգ վուր խփեցի, մէ բաշ սիրտս խիստ խարաբ էլաւ, վուր տէհայ ժամի բոլորքը, գերեզմնու քարերից վուր բուլվար է շինած, ախչկիրքը ու տղիրքը սիլի-բիլի անելով ման ին գալի ու ինչ ասիս խօսում ին։

Աստուձ գիդենայ ուզում էի դիվիր գնամ Տէր-Ղուկասովի մատուռի գլխին կաղնիմ ու էնտղացմէն մէ դայիմ ձէնով բղաւիմ։

«Տօ անասուձնէր, տօ անխճմտանքնիր, էստի ժամի հայեաթ է, թէ եարմուկա, տօ էտ ժամի դուռնէ, թէ Ի՛ սէքսանդրովի բաղի դուռը, տօ չէք ամանչում, ինչ իք հաուց ազգը խայտառակ անում, տօ մէ գնացէք ոսի, ան վրացու ժամ, տէհէք էտ թաւուր բանիր ով է անում, ինչ վուր դուք իք անում. մօշլա արէք էտ եարմուկէն, դուս կորէք էստղանցէմէն, էս ձիր տիղը չէ, միք մուրտի էս պատուական էգեղեցին, միք մասխարա գցիլ տայ միր գլուխը»։

Մագրամ ինձ ու ինձ փիքր արի, վուր ինչքան գուզիս գոռա, ինչքան գուզիս ճղաւի, ով կու իմանայ ջէր մասխարա էլ կու գցին ու կուլի վուր, մէ լաւ էլ դնքսին, կամաց-կամաց գլուխս կախ գցած փասա փուսէս քաշեցի, դուս էկայ ու էն է՝ վուր էլ վուտս չիմ գնում Վանքի ժամը։

Ափսոս էկմալով, ափսոս իմ Վանքի ժամ.

ՃԱՆՋԵՐԻ ՄԻՏԻՆԳ.

Նալաթ՝ չար սատանին, աւտալու բան չէ, մագրամ, էնթաւուր մարթու բէրնէմէն իմացայ, վուր իրա օրումը դրուստ չէ խօսէցի ու աբա հիմի սուտ կօսէ։

Ճանջիրը Մամա-Ղ[illegible]ի գլխին, միտինգ ին ունէցի, իրա աչքով տէհիլ է մարթը. մօդ քառսուն հազար, ճանջ կուլէին կօսէ. մէ ղուդրօ տիղ մօդ էլած, ու մէ չէշմակաւուր ճանջ էսէնց է կցի խօսիլը։

«Ճանչ ննդրտիք, դուք եարաբ վարաւուրդ իք անուում էս միր քաղկի խալխի արարմունքը՝, ինչ հանգի բան ասխ, վուր չին մօգոնում միր քոքը կտրիլու համա, դուք խօմ ձիր աչքով տէհնում իք, թէ ընչիր ին անում։

Ջէր մօգոնեցին էն զահրումար չիքիլէն, վուր խաղողին ու ամեն տէսակ քաղցրը բաներու վրէն ծածկում ին, ինչ է, չուտինք. դրա համա մինք պրաւա չունինք բէդամաղ ըլէլու, էնդուր վուր ամեն մարթ իրա ապրնքին պիտի մուղաթթ կէնայ. մագրամ ամութ չէ իրանց համա, վուր լիժում էլ ինչոր, գրափինկէք մօգոնէցին, մէջը ջուր ին ածում, տակն էլ մէքիչ պէսօկ շաղտալի, մինք էլ ախմախ-ախմախ մէ թիքա պէսօկի խաթրու մօղէնում ինք, պեսոկէմէն լաւ բաբաթի տրզվիլուց յիդը կամաց, կամաց, բոլթա տալով գրափինկի տակէմէն նէքսիւ ինք մտնում, ու մէկ էլ տէհար, տըլըմբ ջուրը ննդար, շատ էլ չալիշ ինք գալի, լէղնում, բղաւում, ճղաւում, ուում դարդն է կտրի միգամա մէ նաւ եա մէ թոկի ծէր հասցնելու։

Հիմի խօմ էնթաւուր բան ին մօգոնի, վուր, Աստուձ, թաւիէ ու Տէրն աղատէ, էտ ջաղօ արած թուխտը, վուր միամիտ նստում ինք ու էլ չինք կանացի վի կէնայ. թէ վուր էդ բանի համա չալիշ չէկանք, միր քոքէմէն, մէկը չի ճնայ նմուշի համայ։

Մագրամ վունց որ, տէհնում իմ, դուք մունջ իք կացի ու էտ խայտարակութինը համփիրում իք, էնդուր վուր ջէր դուք չիք փորցի էտ բիաբուր մահը։

Մինք մահէմէն չպիտի վախենանք, մագրամ, մահ էլ կայ, մահ էլ, միր ասկի բայրաղը հաստատ պահիլու համա, միր պարտականութինն է կուումը մէռնիլը, մագրամ էտ մահը վուր միրննդրտիքը, մեռիլ ին, ու մեռնում ին, մինք դաբուլ չպտի անինք։

Էս բանիրը վուր աբլաբուդէն անէ, բեդամաղ, չինք ըլի, էնդուր վուր նա գաղան է ու միր հին դուշմանը, մագրամ վուր մարթու ձեռով է կատարում էս բանիրը, շատ, մինձ ամութ էտ մարթկերանց համա։

Էտ մարթկերանց համա վուր մէ գլուխ գորում ին, թէ թող մօշլա ըլի մահուան դաղաստանը, իրանք կի ուզում ին միր քոքը կտրի։

Տօ ջէր դուք մօշլա արէք մահուան դաղաստանը, լիժում ձիզ համա չալիշ էկէք. ինչ անինք թէ դուք մարթիք իք ու մինք ճանչիր, էրկուսն էլ Աստու ստիղծած ինք ու նրա հրամանքով շունչ ինք քաշում։

Էս ճանջէմէն հիդը, մէ էրկու ուրիշ ճանջիր էլ վուր խոսիլ ին, միտինգը պրծիլ է, ու միր ճանջիրը մարսելուզ երբիլով դիվիր ին էկի։

Աբա ինչ աւտալու բան է։

ՈՒՄ ԴԻՓԶԻՍ ԿՕՍԷ ԽՄԲԱԳԻՐ ԻՄ

(Նէէր երգիծաբանական թերթերի խմբագիրներին)

—

—Հը Նազա՛ր, բարով, ուր իս ուր, էլ չիս էրէվում։

Է՜ ուստա Գաբօ, ուր իմ, ուր պիտի ըլիմ, պարապ-սարապ ման իմ գալի։ Ինձ ամա, արխէյին արուտուր էի անում, Շէյթան-Բազրումը ափթէքի կուղքին կունճուլումը, բուխկ ու կանանչի էի ծախում. հայ ու թուրքի կուի վուխտը, փախա, ու նըրամէն դիսն է վուր ման իմ գալի, մէ տիղ ճարիմ, ու էլի բուխկ ու կանանչի ծախիմ։

Գաբօ ջան էգէբա մէ լաւ տիղ գիդէնաս, խօմ գիդիս վուր դրամէն սաւայ ուրիշ փէշակ չունիմ, ու ինձմէն լաւ կանանչի ծախուզ էլ քաղքումը չը կայ։

—Իժում, փուղիր ունիս, վուր քիզ համար մէ լաւ տիղ գթնիմ։

Ունիմ Գաբօ ջան, մէ եարսուն թուման կունենամ։

—Եարսուն, թուման՞ն, վա՜ գժիլ իս աօ ախմախ, եարսուն թուման փուղ ունենամ, ու կանանչի ծախիմ.

Բաս ինչ անիմ Գաբօ ջան, վուր ուրիշ փէշակ չունիմ։

—Վունց թէ ինչ անիս, թէ ինձ անգաճ կու դնիս, մէ էնթաուր բան սովրէցնիմ վուր համ փուղ դաղիս համ էլ անում ունենաս, հը, դաբուլ ի՞ս թէ չէ։

Վա՛յ մէ վա՛յ մէ, վուր ասիս ջուրը ննգի կու նընգնիմ, վունց թէ դաբուլ իմ։

—Սա՛յ ասիմ, հէքուց, կէհանք գարացկոյի ուպրաւի առչիւը էլիարովին կու գթնինք, մէ արաղ կու խմեցնինք, մէ մէկ էլ ,մինք կու խըմինք, ու ձեռաց գուլբերնատօրի վրէն մէ պրաշէնա կու գրիլ տանք վուր պրավա տայ քու անումով գազէթ դուս թողնինք։

Իժում Գաբօ ջան, իս վուր գրիլ չիմ գիդի, վունց պիտի գրիմ։

—Է՜, թամամ տուտուց իս էլի Նազար, դուն հէնց գիդիս թէ խմբագրնիրը, դիփունք գիր

գիդէն, դիպ ուրիշներին ին գրում, անումը կի իրանցն է։

Իժում, Գաբօ ջան, մեր գազէթի անումը ինչ պիտի դնինք։

—Էտ հիշտ է, իժում կու մօգոնինք, այ, Լուկէն, քուչա-քուչա խուրմա ծախելով, հօքին դուս էր գալի, հիմի կի ցիլինդրի ունէ ծածկած. մարթը մէ քանի շայի փուղ ունէր, գազէթ դուս թողից ու չունքի ինքը խուրմա ծախող էր իրա գազէթի անումն էլ խուրմա դրից. դուն էլ կանանչի ծախող ես, գուզես քու գազէթի անումն էլ կանանչի դի։

Համա դուն քիչ մուլափ տու, մէ գուբերնատորը պրաւէն տա, իժում տես թէ, ինչ թաւուր անում իմ մօգոնում, ու ինչ թաւուր խօդումն իմ գցում մեր գազէթը։

Մեր խալխը տուտուց է, քանի տուտուց-տուտուց, բանիր գրինք, ու խալխին բիաբուր անինք, էնքան շատ կու ծախի, մա՛ղ։

Վուր խալխը իմանա թէ մեր գազէթը ինչ ինտերէս ունէ ու ինչ թաւուր մարթիք ունինք մէջը գրողներ, առչի գամը գլխին էսէնց կուլի գրած։

Բաց ինք առի բաժանորթագրութին, թազա գազէթի «Լպստած»

Տարէնը 4 մանէթ. կէս տարին, էրկուսու տաս շայի։

Մեր գազէթումը գրում ին անումով, ու Ջոգած մարթիք։

Խուսկի համա՝

Լօքօ կտրտող Վասօ, Ալափ Դէպէշ, ձէթի ուստա Գէուրք, Ալափ Սէրգօ, Ուկրալաշվիլի Աւէտիք, շիրաջ Լիմօն, հաւ ծախող Ստեփան, Գօլա Արութինով, Ուփուլօ, ու էլի ուրիշ շատերը։

Մեր գազէթի ինտերեսն է, վուր մեր խալխը սովրի ամեն տեսակ, ուշունց, բազբոնիկութին՝ դալթաբանդութին ու բիաբուշութին։

Մեր գազէթ կարթացողնիրը խիստ առաչ, կէհան, չունքի ուրիշ գազէթնիր կարթալէմէն շատ յիդ ին ճնացի։

Մեր ադրէսը, բաղալխանա խմբ՝—Կանանչէ-դէն ծախող Նազար. քոմագ անող՝,—Ուստա Գաբօ

Տլէփոն ջէր չունինք։

Հը, վունց է Նազար, հաւնում ես թէ չէ, էսքանը ջէր էրէսին կուլի գրած, մէջն էլ ինչ վուր քեւինիրս կու տա կու գրինք, վուրին կու գովինք, ու վուրին էլ կու փանինք, ով է մեր դաւէքարը, մինք կի, փուղ դադինք, ու... խուսկը գուբերնատորի պրաւէն է մէ դուս գայ, ճնացածը, դիպ հիշ է։ *

Գ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
Գ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Բագուի Հայոց Հոգևոր Դպրոց

ՀՀ Ազգային գրադարան
NL0321926

23279